



Համարը 2200 Ա XXI  
Տիպը Միջազգային պայմանագիր  
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 1997.12.25/29  
Ընդունող մարմինը Միավորված Ազգերի  
Կազմակերպություն (ՄԱԿ)

Տեսակը Հիմնական  
Կարգավիճակը Գործում է  
Ընդունման վայրը Նյու Յորք  
Ընդունման ամսաթիվը 16.12.1966

Ստորագրող մարմինը  
Վավերացնող մարմինը  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 23.03.1976

Ստորագրման ամսաթիվը  
Վավերացման ամսաթիվը  
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳԻՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## Մ Ի Ջ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Դ Ա Շ Ն Ա Գ Ի Ր

### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 1966 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի 2200 Ա (XXI) ԲԱՆԱԶԵՎՈՎ ԵՎ ԲԱՑ Է ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ, ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ 1976 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ` 49 ՀՈՂՎԱԾԻ ՀԱՄԱԶԱՅՆ

#### Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Սույն դաշնագրին մասնակից պետությունները, ուշադրության առնելով այն հանգամանքը, որ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ հռչակված սկզբունքներին համապատասխան մարդկության ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումը հանդիսանում է ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքը,

ընդունելով, որ այդ իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից, ընդունելով, որ Սարդու թավունքների Համընդհանուր Հռչակագրի համաձայն քաղաքացիական և քաղաքական ազատությունից օգտվող և վախից ու կարիքից ազատագրված մարդկային ազատ անհատի իդեալը կարող է իրականանալ միայն այն դեպքում, եթե ստեղծվեն այնպիսի պայմաններ, երբ ամեն ոք կարող է օգտվել իր տնտեսական, սոցիալական ու կուլտուրական իրավունքներից, այնպես, ինչպես իր քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից, ուշադրության առնելով այն հանգամանքը, որ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ պետությունները պարտավոր են խրախուսել մարդու իրավունքների և ազատությունների համընդհանուր հարգանքն ու պահպանումը,

ուշադրության առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր առանձին մարդ, պարտավորություններ ունենալով մյուս մարդկանց ու այն կոլեկտիվի նկատմամբ, որին նա պատկանում է, պետք է հետամուտ լինի սույն դաշնագրում ճանաչվող իրավունքների խրախուսմանն ու պահպանմանը, համաձայնում են ներքոհիշյալ հոդվածների մասին.

#### Մ Ա Ս Ի

##### Հոդված 1

1. Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի բերումով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում են իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը:

2. Բոլոր ժողովուրդներն իրենց նպատակներին հասնելու համար կարող են ազատ տնօրինել իրենց բնական հարստություններն ու ռեսուրսները՝ առանց խախտելու փոխշահավետ սկզբունքի վրա հիմնված միջազգային տնտեսական համագործակցությունից և միջազգային իրավունքից բխող որևէ պարտավորություն: Ոչ մի ժողովուրդ ոչ մի դեպքում չի կարող զրկվել գոյության իրեն պատկանող միջոցներից:

3. Սույն դաշնագրի մասնակից բոլոր պետությունները, այդ թվում՝ նրանք, ովքեր պատասխանատվություն են կրում ինքնակառավարում չունեցող և խնամարկյալ տարածքների կառավարման համար, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության դրույթներին համապատասխան պետք է խրախուսեն ինքնորոշման իրավունքի իրականացումը և հարգեն այդ իրավունքը:

**ՄԱՍ II**

**Հոդված 2**

1. Սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում և իրավագործության տակ գտնվող բոլոր անձանց այն իրավունքները, որոնք ճանաչվել են սույն դաշնագրում, և ապահովել դրանք առանց որևէ տարբերության, այն է՝ ռասայի, մաշկի գույնի, սեռի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի, ծննդի կամ այլ հանգամանքի կապակցությամբ:

2. Եթե դա արդեն չի նախատեսված գոյություն ունեցող օրենսդրական կամ այլ միջոցներով, սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է իր սահմանադրական ընթացակարգերին և սույն դաշնագրի դրույթներին համապատասխան անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ ձեռնարկելու համար, որոնք անհրաժեշտ կլինեն սույն դաշնագրում ճանաչվող իրավունքների իրականացման համար:

3. Սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.

ա/ ցանկացած այն անձի համար, որի սույն դաշնագրում ճանաչվող իրավունքներն ու ազատությունները խախտված են, ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, եթե նույնիսկ այդ խախտումը կատարվել է պաշտոնապես գործող անձի կողմից.

բ/ ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն պահանջող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները.

գ/ ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը, դրանք տրամադրելու դեպքում:

**Հոդված 3**

Սույն դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են ապահովել տղամարդկանց ու կանանց հավասար իրավունք՝ օգտվելու սույն դաշնագրով նախատեսված քաղաքացիական ու քաղաքական բոլոր իրավունքներից:

**Հոդված 4**

1. Պետության մեջ արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում ազգի կյանքը վտանգի տակ է գտնվում և որի առկայության մասին հայտարարվում է պաշտոնապես, սույն դաշնագրի մասնակից պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել ի շեղումն սույն դաշնագրով ստանձնած իրենց պարտավորություններից միայն այնքանով, որքան դա պահանջում է դրության սրությունը, պայմանով, որ այդպիսի միջոցները անհամատեղելի չեն միջազգային իրավունքի գծով իրենց մյուս պարտավորությունների հետ և առաջ չեն բերում խտրականություն բացառապես ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ սոցիալական ծագման հիման վրա:

2. Այդ դրույթը չի կարող հիմք ծառայել 6, 7, 8 (1-ին և 2-րդ կետեր), 11, 15, 16 և 18 հոդվածներից որևէ շեղում կատարելու համար:

3. Սույն դաշնագրի մասնակից ցանկացած պետություն, որն օգտվում է շեղվելու իրավունքից, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարության միջնորդությամբ պետք է անհապաղ տեղեկացնի սույն դաշնագրի մասնակից մյուս պետություններին այն դրույթների մասին, որոնցից ինքը շեղվել է, և այդպիսի որոշում կայացնելու դրդապատճառների մասին: Այդ նույն միջնորդի միջոցով պետք է նաև հաղորդվի այն ամսաթվի մասին, երբ նա դադարեցնում է այդ շեղումը:

**Հոդված 5**

1. Սույն դաշնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել այն նշանակությամբ, որ ինչ-որ պետություն, ինչ-որ խումբ կամ ինչ-որ անձ իրավունք ունի զբաղվելու որևէ գործունեությամբ կամ կատարելու որևէ գործողություն, որոնք ուղղված լինեն սույն դաշնագրում ճանաչված ցանկացած իրավունքի կամ ազատության ռչնչացմանը կամ դրանց սահմանափակմանն ավելի մեծ չափով, քան նախատեսված է սույն դաշնագրում:

2. Չի թույլատրվում սույն դաշնագրին մասնակցող որևէ պետության մեջ օրենքի, կոնվենցիաների, կանոնների կամ սովորույթների ուժով ճանաչվող կամ գոյություն ունեցող՝ մարդու որևէ հիմնական իրավունքի ոչ մի սահմանափակում կամ նվազեցում այն պատրվակով, թե սույն դաշնագրում չի ճանաչվում այդպիսի իրավունք կամ, թե այն դաշնագրում ճանաչվում է նվազ ծավալով:

**ՄԱՍ III**

**Հոդված 6**

1. Ապրելու իրավունքը յուրաքանչյուր մարդու անկապտելի իրավունքն է: Այդ իրավունքը պահպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի քմահաճ ձևով զրկել կյանքից:

2. Այն երկրներում, որոնք չեն վերացրել մահապատիժը, մահվան դատավճիռները կարող են կայացվել միայն ամենածանր հանցագործությունների համար՝ այն օրենքին համապատասխան, որը գործել է հանցագործության կատարման ժամանակ և որը չի հակասում սույն դաշնագրի և Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին պայմանագրի որոշումներին: Այդ պատիժը կարող է իրականացվել միայն ի կատարումն իրավասու դատարանի կողմից կայացված վերջնական դատավճիռի:

3. Եթե կյանքից զրկելը Ցեղասպանության հանցագործություն է, հարկավոր է նկատի ունենալ, որ սույն հոդվածում ոչ

մի բան սույն դաշնագրի մասնակից պետություններին իրավունք չի տալիս որևէ ճանապարհով շեղվել Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժվելու մասին պայմանագրի որոշումների համաձայն ընդունված ցանկացած պարտավորությունից:

4. Ամեն ոք, ով մահապատժի է դատապարտված, իրավունք ունի խնդրելու ներման մասին կամ դատավճիռը մեղմացնելու մասին: Ամխիտիան, ներումը կամ մահապատժի փոխարինումը կարող են շնորհվել բոլոր դեպքերում:

5. Մահապատիժ չի կայացվում տասնութ տարեկանից երիտասարդ անձանց կատարած հանցագործությունների համար և ի կատար չի ածվում հղի կանանց նկատմամբ:

6. Սույն հոդվածում ոչինչ չի կարող հիմք ծառայել սույն դաշնագրի մասնակից որևէ պետության կողմից մահապատժի փոխարինումը հետաձգելու կամ թույլ չտալու համար:

**Հոդված 7**

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ էլ դաժան, անարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես ոչ մի անձ չի կարող առանց իր ազատ արտահայտված համաձայնության ենթարկվել բժշկական կամ գիտական փորձերի:

**Հոդված 8**

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ. ստրկությունը և ստրկավաճառությունը արգելվում են իրենց բոլոր ձևերով:

2. Ոչ ոք չպետք է պահվի անազատ վիճակում:

3. ա/ Ոչ ոք չպետք է բռնադատվի հարկադիր կամ պարտադիր աշխատանքի.

բ/ այն երկրներում, ուր հանցագործության համար որպես պատիժ կարող է նշանակվել ազատազրկում՝ զուգակցված տաժանակիր աշխատանքների հետ, կետ 3 (ա)-ն խոչընդոտ չի հանդիսանում տաժանակիր աշխատանքների նշանակված իրավասու դատարանի դատավճռով այդպիսի պատժի իրականացման համար.

գ/ սույն կետում «հարկադիր կամ պարտադիր աշխատանք» տերմինի մեջ չեն ընդգրկվում.

- III) ա) ենթակետում հիշատակվող որևէ աշխատանք կամ ծառայություն, որը, որպես կանոն, պետք է կատարի դատարանի օրինական կարգադրության հիման վրա կալանքի տակ գտնվող անձը կամ այդպիսի կալանքից պայմանական ազատված անձը.

- ռազմական բնույթի որևէ ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ ճանաչվում է քաղաքական ու կրոնական-էթնիկական շարժառիթներով զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ այդ շարժառիթներով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար օրենքով նախատեսված որևէ ծառայություն.

- որևէ ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին ու բարեկեցությանն սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում.

- որևէ աշխատանք կամ ծառայություն, որը մտնում է սովորական քաղաքացիական պարտականությունների մեջ:

**Հոդված 9**

1. Յուրաքանչյուր մարդ ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել քմահաճ ձեռքարկման կամ կալանքի տակ պահվելու: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով:

2. Յուրաքանչյուր անձի ձեռքարկման ժամանակ նրան հայտնում են ձեռքարկման պատճառները և շտապ կարգով հաղորդվում է նրան ներկայացվող ամեն մի մեղադրանք:

3. Քրեական մեղադրանքով յուրաքանչյուր ձեռքարկված կամ կալանավորված անձ շտապ կարգով հասցվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որին օրենքով պատկանում է դատական իշխանության իրականացման իրավունքը, և որն ունի պատշաճ ժամկետում դատական քննություն վարելու կամ ազատելու իրավունք: Դատական քննության սպասող անձին կալանքի տակ պահելը ընդհանուր կանոն չպետք է լինի, բայց ազատումը կարող է կախման մեջ դրվել դատարան ներկայանալու, ցանկացած փուլում դատական քննության ներկայանալու և, անհրաժեշտության դեպքում, դատավճիռն ի կատար ածելու համար ներկայանալու երաշխիքներ տալուց:

4. Ձեռքարկված կամ կալանքի տակ պահվելու հետևանքով ազատազրկված յուրաքանչյուր անձ օժտված է դատարանում իր գործի քննության իրավունքով, որպեսզի այդ դատարանը կարողանա անհապաղ որոշում կայացնել նրա ձեռքարկված օրինականության վերաբերյալ և նրան ազատելու որոշում կայացնի, եթե ձեռքարկվում անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով եղել է անօրինական ձեռքարկված կամ կալանքի տակ պահվելու գոն, իրավունք ունի հայցային ուժ ունեցող փոխհատուցման:

**Հոդված 10**

1. Ազատազրկված բոլոր անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և մարդկային անհատին ներհատուկ արժանապատվության հարգման իրավունք:

2. ա/ Այն դեպքերում, երբ բացակայում են բացառիկ հանգամանքները, մեղադրյալները տեղավորվում են դատապարտյալներից առանձին և նրանց տրվում է չդատապարտված անձանց վերաբերյալ նրանց կարգավիճակին համապատասխանող առանձին ռեժիմ.

բ/ անչափահաս մեղադրյալներն առանձնացվում են չափահասներից և ամենակարճ ժամկետում հասցվում են դատարան՝ որոշում կայացնելու համար:

3. Պատժական համակարգով ձեռքարկվածների համար նախատեսվում է ռեժիմ, որի էական նպատակը նրանց ուղղումն է և սոցիալական վերադաստիարակությունը: Անչափահաս իրավախախտողները առանձնացվում են

չափահասներից, և նրանց տրվում է իրենց տարիքին ու իրավական կարգավիճակին համապատասխանող ռեժիմ:

**Հոդված 11**

Ոչ ոք չի կարող ազատագրվել միայն այն բանի հիման վրա, որ նա ի վիճակի չէ կատարելու որևէ պայմանագրային պարտավորություն:

**Հոդված 12**

1. Որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող յուրաքանչյուր ոք այդ տարածքի սահմաններում ունի ազատ երթևեկության իրավունք և բնակության վայրի ընտրության ազատություն:
2. Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի լքել ցանկացած երկիր, ներառյալ իր սեփականը:
3. Վերը նշված իրավունքները չեն կարող դառնալ որևէ սահմանափակման օբյեկտ, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսված են օրենքով, անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության կամ էլ ուրիշների և սույն դաշնագրով ճանաչվող այլ իրավունքների հետ համատեղելի իրավունքների ու ազատությունների պահպանման համար:
4. Ոչ ոք չի կարող քմահաճ ձևով զրկվել իր սեփական երկիրը մուտք գործելու իրավունքից:

**Հոդված 13**

Սույն դաշնագրի մասնակից պետություններից որևէ մեկի տարածքում օրինականորեն գտնվող օտարերկրացին կարող է արտաքսվել միայն ի կատարումն օրենքին համապատասխան կայացված որոշման և, եթե պետական անվտանգության հրամայական նկատառումները չեն պահանջում այլ բան, ունի իր արտաքսման դեմ փաստարկների ներկայացման, իրավասու իշխանության կողմից կամ իրավասու իշխանության նշանակված անձի կամ անձանց կողմից իր գործի վերանայման իրավունք, և այդ նպատակով այդ իշխանության, անձի կամ անձանց առջև ներկայացվելու իրավունք:

**Հոդված 14**

1. Բոլոր անձինք հավասար են դատարանների և տրիբունալների առջև: Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանք քննելու կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքներն ու պարտականությունները որոշելու ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու հրապարակավ քննության իրավունք: Մամուլին ու հասարակությանը կարող է թույլ չտրվել մասնակցել ողջ դատաքննությանը կամ նրա որևէ փուլին՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության նկատառումներով, կամ երբ այդ պահանջում են կողմերի մասնավոր կյանքի շահերը կամ էլ հատուկ հանգամանքների դեպքում, երբ հրապարակայնությունը կխախտի արդարադատության շահերը՝ այն չափով, որչափ դատարանի կարծիքով, դա խիստ անհրաժեշտ է, սակայն քրեական կամ քաղաքացիական գործի վերաբերյալ ցանկացած դատական որոշում պետք է հրապարակային լինի, բացառությամբ այն դեպքերի, երբ անչափահասների շահերը պահանջում են այլ բան կամ գործը վերաբերվում է ամուսնական վեճերին կամ երեխաների խնամակալությանը:

2. Քրեական հանցագործության մեջ յուրաքանչյուր մեղադրվող իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով:

3. Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա.

ա/ շտապ կարգով և մանրակրկիտ, այն լեզվով, որը նա հասկանում է, տեղեկացվի իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին.

բ/ բավարար չափով ժամանակ ու հնարավորություններ ունենա իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր իսկ ընտրած պաշտպանի հետ հարաբերությունների մեջ մտնելու համար.

գ/ դատվի առանց չարդարացված հապաղման.

դ/ դատվի իր ներկայությամբ և պաշտպանի իրեն անձամբ կամ իր իսկ ընտրած պաշտպանի միջոցով. եթե նա չունի պաշտպան՝ տեղեկացված լինի այդ իրավունքի մասին և ունենա իր համար նշանակված պաշտպան ցանկացած դեպքում, երբ դա պահանջում են արդարադատության շահերը, նրա համար անհատույց բոլոր այն դեպքերում, եթե նա բավականաչափ միջոցներ չունի այդ պաշտպանին վճարելու համար.

ե/ հարցաքննել նրան հակացուցող վկաներին կամ իրավունք ունենալ, որ այդ վկաները հարցաքննվեն, և ունենալ իր վկաներին կանչելու և հարցաքննելու իրավունք՝ այն նույն պայմաններով, որ գոյություն ունեն նրան հակացուցող վկաների համար.

զ/ օգտվել թարգմանի անվճար օգնությունից, եթե նա չի հասկանում դատարանում օգտագործվող լեզուն, կամ չի խոսում այդ լեզվով.

է/ չպարտադրվի իր դեմ ցուցմունքներ տալու կամ իրեն մեղավոր ճանաչելու:

4. Անչափահասների վերաբերմամբ դատավարությունը պետք է այնպիսին լինի, որպեսզի հաշվի առնվեն նրանց տարիքը և նրանց վերադաստիարակությանն աջակցելու ցանկալիությունը:

5. Որևէ հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի իր դատապարտումը և դատավճիռը վերանայվեն վերադաս դատական աստիճանի կողմից, օրենքի համաձայն:

6. Եթե որևէ անձ վերջնական որոշմամբ դատապարտվել է քրեական հանցագործության համար և եթե նրա նկատմամբ կայացված դատավճիռը հետագայում բեկանվել է կամ նրան ներում է շնորհվել այն հիմունքով, որ ինչ-որ նոր հանգամանք կամ նոր բացահայտված հանգամանք անվիճելիորեն ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա այդպիսի դատապարտման հետևանքով պատիժ կրած անձը փոխհատուցում է ստանում օրենքի համաձայն, եթե

չապացուցվի, որ հիշյալ անհայտ հանգամանքը ժամանակին չի բացահայտվել բացառապես կամ մասամբ նրա մեղքով:

7. Ոչ ոք չպետք է կրկին անգամ դատվի կամ պատժվի այն հանցագործության համար, որի համար նա արդեն վերջնականապես դատապարտվել է կամ արդարացվել յուրաքանչյուր երկրի օրենքին և քրեական դատավարության իրավունքին համապատասխան:

**Հոդված 15**

1. Ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել որևէ գործողության կամ թողությունների հետևանքով որևէ քրեական հանցագործություն կատարելու մեջ, որը, այն կատարվելու պահին գործող ներպետական օրենսդրության կամ միջազգային իրավունքի համաձայն, չի հանդիսացել քրեական հանցագործություն: Հավասարապես, չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառման էր ենթակա քրեական հանցագործության կատարման պահին: Եթե հանցագործությունը կատարվելուց հետո օրենքով ավելի թեթև պատիժ է սահմանվում, այդ օրենքի գործողությունը տարածվում է տվյալ հանցագործի վրա:

2. Սույն հոդվածում ոչինչ չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալուն կամ պատժելուն ցանկացած արարքի կամ թողության համար, որոնք կատարվելու պահին ըստ միջազգային հանրության կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքների, հանդիսացել են քրեական հանցագործություն:

**Հոդված 16**

Յուրաքանչյուր մարդ, որտեղ էլ նա գտնվելիս լինի, ունի իր իրավասությունների ճանաչման իրավունք:

**Հոդված 17**

1. Ոչ ոք չի կարող ենթարկվել քմահաճ կամ անօրինական միջամտության իր անձնական և ընտանեկան կյանքին, քմահաճ կամ անօրինական ոտնձգության իր բնակարանի անձեռնմխելիության կամ իր թղթակցության գաղտնիքի նկատմամբ, կամ էլ անօրինական ոտնձգության՝ իր պատվի ու հեղինակության նկատմամբ:

2. Յուրաքանչյուր մարդ ունի այդպիսի միջամտությունից կամ այդպիսի ոտնձգություններից օրենքի պաշտպանության իրավունք:

**Հոդված 18**

1. Յուրաքանչյուր մարդ ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այդ իրավունքն ընդգրկում է սեփական ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը և ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ միաստեղ, հրապարակավ կամ մասնավոր կարգով իր կրոնն ու համոզմունքները դավանելու ազատությունը, պաշտամունքի իրականացման, կրոնական ու ծիսական արարողությունների և վարդապետությունների իրականացման ազատությունը:

2. Ոչ ոք չպետք է ենթարկվի այնպիսի հարկադրանքի, որը նսեմացնում է իր ընտրությամբ կրոն կամ համոզմունքներ ունենալու կամ ընդունելու ազատությունը:

3. Կրոնին կամ համոզմունքներին դավանելու ազատությունը ենթարկվում է միայն օրենքով սահմանված և հասարակական անվտանգության, կարգուկանոնի, առողջության ու բարոյականության, ինչպես և այլ անձանց հիմնական իրավունքների ու ազատությունների պահպանման համար անհրաժեշտ սահմանափակումների:

4. Սույն դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են հարգել ծնողների և համապատասխան դեպքերում օրինական խնամակալների ազատությունը՝ ապահովելու իրենց երեխաների կրոնական ու բարոյական դաստիարակությունը սեփական համոզմունքներին համապատասխան:

**Հոդված 19**

1. Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի անարգել կերպով հավատարիմ մնալ իր կարծիքներին:

2. Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մասուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքներից օգտվելը դնում է հատուկ պարտականություններ և հատուկ պատասխանատվություն: Հետևաբար, այն կապված է որոշ սահմանափակումների հետ, սակայն, պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ.

ա/ այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու համար.

բ/ պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության համար:

**Հոդված 20**

1. Պատերազմի որևէ քարոզչություն պետք է արգելվի օրենքով:

2. Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության օգտին որևէ ելույթ, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության սադրանք, պետք է արգելվի օրենքով:

**Հոդված 21**

Ճանաչվում է խաղաղ ժողովների իրավունքը: Այդ իրավունքից օգտվելը ենթակա չէ ոչ մի սահմանափակման, բացի նրանցից, որոնք դրվում են օրենքին համապատասխան և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության ու

բարոյականության պահպանության կամ մյուս անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության:

**Հոդված 22**

1. Յուրաքանչյուր մարդ ունի ուրիշների հետ ընկերակցության ազատության իրավունք, ներառյալ արհմիություններ ստեղծելու և իր շահերի պաշտպանության համար դրանց մեջ մտնելու իրավունքը:

2. Այդ իրավունքից օգտվելը ենթակա չէ ոչ մի սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսվում են օրենքով և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության ու բարոյականության պահպանության կամ մյուս անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության:

Սույն հոդվածը չի խոչընդոտում այդ իրավունքից օգտվելու օրինական սահմանափակումներ մտցնելուն այն անձանց համար, ովքեր մտնում են զինված ուժերի ու ոստիկանության կազմի մեջ:

3. Սույն հոդվածում ոչինչ իրավունք չի տալիս ասոցիացիաների ազատության և կազմակերպություն ստեղծելու իրավունքի վերաբերյալ աշխատանքի միջազգային կազմակերպության 1948 թվականի կոնվենցիային մասնակցող պետություններին՝ ընդունելու օրենսդրական ակտեր՝ ի վնաս նշված կոնվենցիայում նախատեսվող երաշխիքների, կամ օրենքը կիրառելու այնպես, որ վնաս հասցվի այդ երաշխիքներին:

**Հոդված 23**

1. Ընտանիքը հանդիսանում է հասարակության բնական ու հիմնական բջիջը և ունի հասարակության ու պետության կողմից պաշտպանվելու իրավունք:

2. Ամուսնության տարիքի հասած տղամարդկանց և կանանց համար ճանաչվում է ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքը:

3. Ոչ մի ամուսնություն չի կարող կայանալ առանց ամուսնացողների ազատ ու լիակատար համաձայնության:

4. Սույն դաշնագրի մասնակից պետությունները պետք է պատշաճ միջոցներ ձեռնարկեն ամուսնության պահին, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության դեպքում ամուսինների իրավունքների ու պարտականությունների հավասարությունն ապահովելու համար: Ամուսնալուծության դեպքում պետք է նախատեսվի բոլոր երեխաների անհրաժեշտ պաշտպանությունը:

**Հոդված 24**

1. Յուրաքանչյուր երեխա, առանց ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի կամ ծննդի հատկանիշով որևէ խտրականության, իրավունք ունի իր ընտանիքի, հասարակության և պետության կողմից պաշտպանության այնպիսի միջոցների, որոնք անհրաժեշտ են նրան որպես մանկահասակի:

2. Յուրաքանչյուր երեխա պետք է գրանցվի իր ծնվելուց անմիջապես հետո և անուն ունենա:

3. Յուրաքանչյուր երեխա ունի քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

**Հոդված 25**

Յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2-րդ հոդվածում հիշատակվող որևէ խտրականության և առանց անհիմն սահմանափակումների, պետք է իրավունք և հնարավորություն ունենա.

ա/ մասնակցելու պետական գործերը վարելուն՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով.

բ/ քվեարկել և ընտրվել իսկական պարբերական ընտրություններում, որոնք անց են կացվում համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, և ապահովում են ընտրողների կամքի ազատ արտահայտումը.

գ/ իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնել պետական ծառայություն:

**Հոդված 26**

Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքի հավասար պաշտպանության իրավունք: Այդ առնչությամբ որևէ կարգի խտրականություն պետք է արգելվի օրենքով, և օրենքը բոլոր անձանց համար պետք է երաշխավորի հավասար և արդյունավետ պաշտպանություն խտրականությունից, ըստ որևէ հատկանիշի, այն է՝ ըստ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի, ծննդի կամ այլ հանգամանքի:

**Հոդված 27**

Այն երկրներում, որտեղ գոյություն ունեն էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններ, այդ փոքրամասնություններին պատկանող անձանց չի կարող մերժվել այդ նույն խմբի այլ անդամների հետ համատեղ իրենց մշակութից օգտվելու, իրենց կրոնը դավանելու և դրա ծեսերը կատարելու, ինչպես նաև մայրենի լեզվից օգտվելու իրավունքը:

**ՄԱՍ IV**

**Հոդված 28**

1. Կազմվում է Մարդու իրավունքների կոմիտե (որն այսուհետև սույն դաշնագրում անվանվում է Կոմիտե): Այն կազմված է տասնութ անդամներից և կատարում է ստորև նախատեսվող ֆունկցիաները:

2. Կոմիտեի կազմի մեջ մտնում են այն անձինք, ովքեր սույն դաշնագրի մասնակից պետությունների

քաղաքացիներեն և օժտված են բարոյական բարձր հատկանիշներով ու մարդու իրավունքների բնագավառի ճանաչված իրավաստությամբ, ընդ որում՝ նկատի է առնվում իրավաբանական փորձ ունեցող մի քանի անձանց մասնակցության օգտակարությունը:

3. Կոմիտեի անդամներն ընտրվում և աշխատում են անձնապես:

**Հոդված 29**

1. Կոմիտեի անդամներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ այն անձանց ցուցակից, ովքեր բավարարում են 28-րդ հոդվածում նախատեսվող պահանջները և այդ նպատակով առաջադրվել են սույն դաշնագրի մասնակից պետությունների կողմից:

2. Սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն կարող է առաջադրել երկու անձից ոչ ավելի: Այդ անձինք պետք է լինեն իրենց առաջադրող պետության քաղաքացիներ:

3. Յուրաքանչյուր անձ ունի կրկնական առաջադրման իրավունք:

**Հոդված 30**

1. Նախնական ընտրություններն անց են կացվում սույն դաշնագրի ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան վեց ամիս հետո:

2. Կոմիտեի յուրաքանչյուր ընտրությունների օրվանից առնվազն չորս ամիս առաջ, բացի 34 հոդվածին համապատասխան թափուր հայտարարվող տեղերի համալրման ընտրություններից, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը գրավոր հրավերով դիմում է սույն դաշնագրի մասնակից պետություններին՝ երեք ամսվա ընթացքում ներկայացնելու կոմիտեի անդամության թեկնածություններ:

3. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կազմում է նման ձևով առաջարկված բոլոր անձանց այբբենական ցուցակ, նշելով սույն դաշնագրի մասնակից պետությունները, որոնք առաջադրել են այդ անձանց, և այդ ցուցակը ներկայացնում է սույն դաշնագրի մասնակից պետություններին ոչ ուշ, քան յուրաքանչյուր ընտրությունների անցկացման օրվանից մեկ ամիս առաջ:

4. Կոմիտեի անդամների ընտրությունն անց է կացվում սույն դաշնագրի մասնակից պետությունների նիստում, որը հրավիրում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հիմնարկներում: Այդ նիստում, որի համար քվորում է հանդիսանում սույն դաշնագրի մասնակից պետությունների երկու երրորդի ներկայությունը, Կոմիտեի կազմում ընտրված են համարվում այն անձինք, որոնց թեկնածություններն ստանում են առավել թվով ձայներ և մասնակից պետությունների ներկա գտնվող ու քվեարկող ներկայացուցիչների ձայների բացարձակ մեծամասնությունը:

**Հոդված 31**

1. Կոմիտեի կազմի մեջ չի կարող մտնել նույն պետության մեկից ավելի քաղաքացի:

2. Կոմիտեի ընտրությունների ժամանակ հաշվի է առնվում անդամների աշխարհագրական իրավացի բաշխումը և քաղաքակրթության տարբեր ձևերի ու իրավաբանական հիմնական համակարգերի ներկայացուցչությունը:

**Հոդված 32**

1. Կոմիտեի անդամներն ընտրվում են չորսամյա ժամկետով: Նրանք իրավունք ունեն վերընտրվելու իրենց թեկնածությունների կրկնական առաջադրման դեպքում: Սակայն առաջին ընտրությունների ժամանակ ընտրված անդամներից իննի լիազորությունների ժամկետը լրանում է երկամյա ժամանակահատվածի վերջում. առաջին ընտրություններից անմիջապես հետո այդ ինն անդամների անունները որոշվում են վիճակահանությամբ այն նիստի նախագահի կողմից, որի մասին հիշատակվում է 30-րդ հոդվածի 4-րդ կետում:

2. Լիազորությունները լրանալուց հետո ընտրություններն անց են կացվում սույն դաշնագրի տվյալ մասի նախորդ հոդվածներին համապատասխան:

**Հոդված 33**

1. Եթե Կոմիտեի որևէ անդամ մյուս անդամների միաձայն կարծիքով դադարել է իր ֆունկցիաները կատարել որևէ պատճառով, բացի ժամանակավոր բացակայությունից, կոմիտեի նախագահը տեղյակ է պահում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այնուհետև այդ անդամի տեղը հայտարարում է թափուր:

2. Կոմիտեի որևէ անդամի մահվան կամ պաշտոնաթողության դեպքում նախագահն անհապաղ տեղյակ է պահում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այդ տեղը հայտարարում է թափուր մահվան օրվանից կամ այն օրվանից, երբ պաշտոնաթողությունը փաստացի է դառնում:

**Հոդված 34**

1. Երբ 33-րդ հոդվածին համապատասխան տեղը թափուր է հայտարարվում և եթե փոխարկման ենթակա անդամի լիազորությունների ժամկետը չի լրանում այդ տեղը թափուր հայտարարելուց հետո վեց ամսվա ընթացքում, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը տեղյակ է պահում սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետությանը, որը կարող է երկու ամսվա ընթացքում, 29-րդ հոդվածին համապատասխան, թեկնածություն ներկայացնել այդ թափուր տեղի համար:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կազմում է նման ձևով առաջադրված անձանց այբբենական ցուցակը և ներկայացնում սույն դաշնագրի մասնակից պետություններին: Թափուր տեղի համար ընտրություններն այնուհետև անց են կացվում սույն դաշնագրի տվյալ մասի համապատասխան դրույթների համաձայն:

3. Կոմիտեի այն անդամը, որն ընտրված է 33-րդ հոդվածին համապատասխան հայտարարված թափուր տեղի

համար, պաշտոնն զբաղեցնում է այն անդամի լիազորությունների ժամկետի մնացած մասի ընթացքում, որի տեղը կոմիտեում ազատվել է հիշյալ հոդվածի դրույթների համաձայն:

**Հոդված 35**

Կոմիտեի անդամներն ստանում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատվող վարձատրում Միավորված ազգերի կազմակերպության միջոցներից, գլխավոր ասամբլեայի կողմից սահմանվող կարգով ու պայմաններով՝ հաշվի առնելով Կոմիտեի պարտականությունների կարևորությունը:

**Հոդված 36**

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը անհրաժեշտ անձնակազմ ու նյութական միջոցներ է տրամադրում կոմիտեի սույն դաշնագրին համապատասխան ֆունկցիաներն արդյունավետ իրականացնելու համար:

**Հոդված 37**

- 1. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը հրավիրում է կոմիտեի առաջին նիստը Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հիմնարկներում:
- 2. Իր առաջին նիստից հետո Կոմիտեն հավաքվում է նրա ընթացակարգի կանոններում նախատեսված ժամանակ:
- 3. Կոմիտեն սովորաբար հավաքվում է Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հիմնարկներում կամ Միավորված ազգերի կազմակերպության Ժնևի բաժանմունքում:

**Հոդված 38**

Կոմիտեի յուրաքանչյուր անդամ, մինչև իր պարտականությունների կատարմանը ձեռնամուխ լինելը, Կոմիտեի դրնբաց նիստում հանդիսավոր հայտարարություն է անում իր ֆունկցիաների անաչառ և բարեխիղճ իրականացման մասին:

**Հոդված 39**

- 1. Կոմիտեն իր պաշտոնատար անձանց ընտրում է երկամյա ժամկետով: Նրանք կարող են վերընտրվել:
- 2. Կոմիտեն սահմանում է ընթացակարգի իր սեփական կանոնները, բայց այդ կանոնները պետք է, մասնավորապես, նախատեսեն, որ,
  - ա/ քվորում են կազմում կոմիտեի տասներկու անդամները.
  - բ/ Կոմիտեի որոշումներն ընդունվում են ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

**Հոդված 40**

- 1. Սույն դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են զեկույցներ ներկայացնել սույն դաշնագրով ճանաչվող իրավունքների կենսագործման ուղղությամբ իրենց կողմից ձեռնարկված միջոցների մասին և այդ իրավունքների օգտագործման բնագավառում ձեռք բերված առաջադիմության մասին.
  - ա/ սույն դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ համապատասխան մասնակից պետությունների վերաբերյալ.
    - բ/ դրանից հետո՝ բոլոր այն դեպքերում, երբ դա կպահանջի Կոմիտեն:
  - 2. Բոլոր զեկույցները ներկայացվում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանք ուղարկում է Կոմիտեին՝ քննության առնելու համար: Չեկույցներում նշվում են, եթե այդպիսիք կան, այն գործունեներն ու դժվարությունները, որոնք ազդում են սույն դաշնագրի կենսագործման վրա:
  - 3. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո կարող է շահագրգիռ մասնագիտացված հիմնարկներին ուղարկել զեկույցների այն մասերի օրինակներ, որոնք կարող են վերաբերել նրանց իրավասության ոլորտին:
  - 4. Կոմիտեն ուսումնասիրում է սույն դաշնագրի մասնակից պետությունների կողմից ներկայացվող զեկույցները: Նա մասնակից պետություններին է ուղարկում իր զեկույցները և ընդհանուր կարգի այնպիսի դիտողություններ, որոնք ինքը նպատակահարմար կհամարի: Կոմիտեն կարող է նաև Տնտեսական և սոցիալական խորհրդին ուղարկել այդ դիտողությունները՝ սույն դաշնագրի մասնակից պետություններից ստացված զեկույցների օրինակների հետ միասին:
  - 5. Սույն դաշնագրի մասնակից պետությունները կարող են Կոմիտեին ներկայացնել իրենց նկատառումները բոլոր այն դիտողությունների վերաբերյալ, որոնք կարող են արվել սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

**Հոդված 41**

- 1. Սույն հոդվածին համապատասխան սույն դաշնագրի մասնակից պետությունը կարող է ցանկացած ժամանակ հայտարարել, թե ինքը ճանաչում է Կոմիտեի իրավասությունը՝ ստանալու և քննարկելու հաղորդումներ այն մասին, որ որևէ մասնակից պետություն հաստատում է, թե մյուս մասնակից պետությունը չի կատարում սույն դաշնագրով նախատեսված իր պարտականությունները: Սույն հոդվածով նախատեսվող հաղորդումները կարող են ընդունվել և քվեարկվել միայն այն դեպքում, եթե դրանք ներկայացվել են այն մասնակից պետության կողմից, որը հայտարարություն է արել, թե ինքը ճանաչում է այդ Կոմիտեի իրավասությունը: Կոմիտեն չի ընդունում ոչ մի հաղորդում, եթե այն վերաբերում է նման հայտարարություն չարած մասնակից պետությանը: Սույն հոդվածին համապատասխան ստացված հաղորդումները քննության են առնվում հետևյալ ընթացակարգի համապատասխան.
  - ա/ եթե դաշնագրի մասնակից որևէ պետություն գտնում է, որ մյուս մասնակից պետությունը չի կենսագործում սույն դաշնագրի որոշումները, ապա նա կարող է գրավոր հաղորդմամբ այդ հարցի մասին տեղեկացնել հիշյալ մասնակից պետությանը: Այդ հաղորդումն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում հաղորդումն ստացած պետությունը այդպիսի



հաղորդում հղած պետությանը ներկայացնում է այդ հարցի պարզաբանմամբ գրավոր բացատրություն կամ ցանկացած այլ հայտարարություն, որտեղ պետք է բովանդակվեն, որքանով դա հնարավոր ու նպատակահարմար է, այն ներքին ընթացակարգն ու միջոցառումները, որոնք ընդունվել են, կրնալով կամ կարող են ընդունվել տվյալ հարցի առնչությամբ:

բ/ եթե ստացող պետության կողմից նախնական հաղորդումն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում հարցը չի լուծված ի բավարարություն երկու շահագրգիռ մասնակից պետությունների, այդ պետություններից յուրաքանչյուրը իրավունք ունի հարցը հանձնել Կոմիտեին, այդ մասին տեղեկացնելով Կոմիտեին և մյուս պետությանը:

գ/ Կոմիտեն իրեն հանձնված հարցը քննության է առնում միայն այն բանից հետո, երբ հավաստիանում է, որ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներին համապատասխան բոլոր մատչելի ներքին միջոցները տվյալ դեպքում փորձվել և սպառվել են: Այդ կանոնը չի գործում, երբ այդ միջոցների կիրառումը չարդարացված կերպով ձգձգվում է:

դ/ սույն հոդվածում նախատեսվող հաղորդումները քննության առնելիս Կոմիտեն անց է կացնում դռնփակ նիստեր:

ե/ Կոմիտեն գ/ ենթակետի դրույթները պահպանելով, իր բարի ծառայություններն է մատուցում շահագրգիռ մասնակից պետություններին՝ սույն դաշնագրում ճանաչվող մարդու իրավունքների հիմնական ազատությունների հիման վրա հարցը բարեկամաբար լուծելու նպատակով:

զ/ իր քննարկմանը հանձնված ցանկացած հարցով Կոմիտեն կարող է դիմել բ/ ենթակետում հիշատակված շահագրգիռ մասնակից պետություններին՝ գործին վերաբերող ցանկացած ինֆորմացիա տալու խնդրանքով:

է/ այն շահագրգիռ մասնակից պետությունները, որոնք հիշատակված են բ/ ենթակետում, իրավունք ունեն ներկայացվել Կոմիտեում հարցի քննարկման ժամանակ ու առաջարկություններ անել բանավոր և կամ գրավոր:

ը/ ծանուցում ստանալու օրվանից հետո տասներկու ամսվա ընթացքում Կոմիտեն բ/ ենթակետին համապատասխան զեկույց է ներկայացնում:

- եթե ե/ ենթակետի դրույթների շրջանակներում լուծում է ձեռք բերվում, ապա Կոմիտեն իր զեկույցում սահմանափակվում է փաստերը և ձեռք բերված լուծումը հակիրճ շարադրելով:

- եթե ե/ ենթակետի դրույթների շրջանակներում լուծում ձեռք բերված չէ, ապա Կոմիտեն իր զեկույցում սահմանափակվում է փաստերի հակիրճ շարադրանքով: շահագրգիռ մասնակից պետությունների գրավոր միջնորդությունները և բանավոր միջնորդությունների գրառումը կցվում են զեկույցին:

Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ զեկույցն ուղարկվում է շահագրգիռ մասնակից պետություններին:

2. Սույն հոդվածի դրույթներն ուժի մեջ են մտնում, երբ սույն դաշնագրի մասնակից պետությունները հանդես են գալիս հայտարարությամբ սույն հոդվածի առաջին կետին համապատասխան: Այդպիսի հայտարարությունները մասնակից պետությունները որպես ավագ հանձնում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանց պատճեններն ուղարկում է մնացած մասնակից պետություններին: Հայտարարությունը ցանկացած ժամանակ կարող է ետ վերցվել Գլխավոր քարտուղարի ծանուցմամբ: Նման գործողությունը չի խոչընդոտում ցանկացած հարցի քննարկմանը, որը սույն հոդվածին համապատասխան արդեն ուղարկված հաղորդման առարկա է հանդիսանում: Ցանկացած մասնակից պետության ոչ մի հետագա հաղորդում չի ընդունվում այն բանից հետո, երբ գլխավոր քարտուղարն ստացել է ծանուցում հայտարարությունը ետ վերցնելու մասին, եթե շահագրգիռ մասնակից պետությունը հանդես չի եկել նոր հայտարարությամբ:

**Հոդված 42**

1. ա/ եթե 41-րդ հոդվածին համապատասխան Կոմիտեին հանձնված որևէ հարց չի լուծվել ի բավարարումն շահագրգիռ մասնակից պետությունների, Կոմիտեն կարող է շահագրգիռ մասնակից պետությունների նախնական համաձայնությամբ նշանակել հատուկ համաձայնեցման հանձնաժողով (հետագայում անվանվում է «Հանձնաժողով»): Հանձնաժողովի բարի ծառայությունները շահագրգիռ մասնակից պետություններին են մատուցվում սույն դաշնագրի դրույթների պահպանման հիման վրա, տվյալ հարցի փոխհամաձայնեցված լուծման նպատակով:

բ/ Հանձնաժողովը կազմված է հինգ հոգուց, որոնք ընդունելի են շահագրգիռ մասնակից պետությունների համար: Եթե շահագրգիռ մասնակից պետությունները երեք ամսվա ընթացքում համաձայնություն ձեռք չբերեն հանձնաժողովի ամբողջ կազմի կամ նրա մի մասի վերաբերյալ, ապա հանձնաժողովի այն անդամները, որոնք նշանակման հարցում համաձայնություն ձեռք չի բերվել, ընտրվում են Կոմիտեի կազմի անդամներից գաղտնի քվեարկությամբ, Կոմիտեի ձայների երկու երրորդի մեծամասնությամբ:

2. Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կատարում են անձնապես: Նրանք չպետք է լինեն շահագրգիռ մասնակից պետությունների քաղաքացի կամ սույն դաշնագրին ոչ մասնակից պետության կամ այն մասնակից պետության քաղաքացիներ, որը հանդես չի եկել 41-րդ հոդվածին համապատասխան հայտարարություններով:

3. Հանձնաժողովն ընտրում է իր նախագահին և հաստատում է ընթացակարգի իր սեփական կանոնները:

4. Հանձնաժողովի նիստերը սովորաբար անց են կացվում Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հիմնարկներում կամ Միավորված ազգերի կազմակերպության Ժնևի բաժանմունքում: Սակայն դրանք կարող են անցկացվել այնպիսի այլ հարմար վայրերում, որոնք կարող են որոշվել հանձնաժողովի կողմից՝ խորհրդակցելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի և համապատասխան մասնակից պետությունների հետ:

5. 36 հոդվածին համապատասխան ներկայացված քարտուղարությունն սպասարկում է նաև այն հանձնաժողովներին, որոնք նշանակվում են սույն հոդվածի հիման վրա:

6. Կոմիտեի կողմից ստացված և ուսումնասիրված ինֆորմացիան հանձնվում է հանձնաժողովի տնօրինությանը, և նա շահագրգիռ մասնակից պետություններին կարող է դիմել գործին առնչվող ցանկացած ինֆորմացիա ներկայացնելու խնդրանքով:

7. Հանձնաժողովի կողմից հարցն ամբողջությամբ քննարկվելուց հետո, բայց, համենայնդեպս, ոչ ուշ, քան տվյալ

հարցը հանձնաժողովին հանձնելուց 12 ամիս հետո, նա կոմիտեի նախագահին ներկայացնում է զեկույց շահագրգիռ մասնակից պետություններին ուղարկելու համար:

ա/ Եթե հանձնաժողովը չի կարող ավարտել տվյալ հարցի քննարկումը տասներկու ամսվա սահմաններում, ապա նա իր զեկույցը սահմանափակում է իր կողմից տվյալ հարցի քննարկման վիճակի հակիրճ շարադրանքով:

բ/ Եթե տվյալ հարցի փոխհամաձայնեցված լուծումը ձեռք է բերվում սույն դաշնագրում ճանաչվող մարդու իրավունքների պահպանման հիման վրա, հանձնաժողովն իր զեկույցը սահմանափակում է փաստերի և ձեռք բերված որոշման հակիրճ շարադրանքով:

գ/ Եթե բ/ ենթակետում նշված որոշումը ձեռք չի բերվում, հանձնաժողովի զեկույցը պարունակում է նրա փաստացի եզրակացությունները բոլոր այն հարցերի վերաբերյալ, որոնք առնչվում են շահագրգիռ մասնակից պետությունների վեճին, և հանձնաժողովի նկատառումներն այդ հարցի փոխհամաձայնեցված կարգավորման հնարավորությունների մասին: Այդ զեկույցը պարունակում է նաև շահագրգիռ մասնակից պետությունների կողմից արված գրավոր միջնորդությունները և բանավոր միջնորդությունների գրառումը:

դ/ Եթե հանձնաժողովի զեկույցը ներկայացվում գ/ ենթակետի համաձայն, ապա շահագրգիռ մասնակից պետություններն այդ զեկույցն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում Կոմիտեի նախագահին տեղեկացնում են այն մասին, թե իրենք համաձայն են հանձնաժողովի զեկույցի բովանդակության հետ:

8. Սույն հոդվածի դրույթները չեն նվազեցնում կոմիտեի այն պարտականությունները, որոնք նախատեսված են 41-րդ հոդվածում:

9. Շահագրգիռ մասնակից պետությունները հավասարապես կրում են հանձնաժողովի անդամների բոլոր ծախսերը՝ քարտուղարի կողմից ներկայացվող նախահաշվին համապատասխան:

10. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը իրավունք ունի, անհրաժեշտության դեպքում, վճարել հանձնաժողովի անդամների ծախսերը մինչև դրանց հատուցումը շահագրգիռ մասնակից պետությունների կողմից՝ սույն հոդվածի 9-րդ կետին համապատասխան:

**Հոդված 43**

Կոմիտեի և հատուկ համաձայնեցման հանձնաժողովների անդամները, որոնք կարող են նշանակվել 42-րդ հոդվածի համաձայն, ունեն այն փորձագետների արտոնությունների, առավելությունների և անձեռնմխելիության իրավունք, որոնք Միավորված ազգերի կազմակերպության կողմից ուղարկվում են գործուղումների, ինչպես դա նախատեսված է Միավորված ազգերի կազմակերպության արտոնությունների և անձեռնմխելիության կոնվենցիայի համապատասխան բաժիններում:

**Հոդված 44**

Սույն դաշնագրի իրականացմանը վերաբերող դրույթները կիրառվում են՝ առանց վնասելու Միավորված ազգերի կազմակերպության և մասնագիտացված հիմնարկների հիմնադիր ակտերով ու կոնվենցիաներով կանոնակարգվող մարդու իրավունքների բնագավառի ընթացակարգին կամ դրանց համապատասխան, և սույն դաշնագրի մասնակից պետություններին չեն խանգարում օգտագործել վեճերի լուծման այլ ընթացակարգեր՝ իրենց միջև գործող ընդհանուր և հատուկ միջազգային համաձայնագրերի հիման վրա:

**Հոդված 45**

Կոմիտեն Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեային Տնտեսական և սոցիալական խորհրդի միջոցով ներկայացնում է ամենամյա զեկուցում իր գործունեության մասին:

**ՄԱՍ V**

**Հոդված 46**

Սույն դաշնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես Միավորված ազգերի կազմակերպության և մասնագիտացված հիմնարկների կանոնադրության այն դրույթների նշանակության նվազեցում, որոնք որոշում են Միավորված ազգերի կազմակերպության և մասնագիտացված հիմնարկների տարբեր մարմինների համապատասխան պարտականություններն այն հարցերի շուրջ, որոնց վերաբերում է սույն դաշնագիրը:

**Հոդված 47**

Սույն դաշնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես իրենց բնական հարստություններին ու ռեսուրսներին տիրապետելու և դրանցից լիակատար օգտվելու՝ բոլոր ժողովուրդների անկապտելի իրավունքի սահմանափակում:

**ՄԱՍ VI**

**Հոդված 48.**

1. Սույն դաշնագիրը բաց է ստորագրելու համար Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամ պետության կամ նրա ցանկացած մասնագիտացված հիմնարկների անդամի, Միջազգային Դատարանի Մտատուսի մասնակից ցանկացած պետության և սույն դաշնագրին մասնակցելու նպատակով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հրավիրած ցանկացած այլ պետության կողմից:

2. Սույն դաշնագիրը ենթակա է վավերացման: Վավերագրերը ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

3. Սույն դաշնագիրը բաց է սույն հոդվածի 1-ին կետում նշված ցանկացած պետության համար՝ միանալու այդ

դաշնագրին:

4. Դաշնագրին միանալը տեղի է ունենում միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելով:

5. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն դաշնագրին ստորագրած կամ դաշնագրին միացած բոլոր պետություններին տեղեկացնում է յուրաքանչյուր վավերագիրը կամ միանալու վերաբերյալ փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին:

**Հոդված 49.**

1. Սույն դաշնագրին ուժի մեջ է մտնում երեսուհինգերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթղթերը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց:

2. Յուրաքանչյուր պետության համար, որը վավերացնում է սույն դաշնագիրը կամ միանում է դրան երեսուհինգերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը ի պահ հանձնելուց հետո, սույն դաշնագիրը ուժի մեջ է մտնում իր սեփական վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո:

**Հոդված 50**

Սույն դաշնագրի դրույթները տարածվում են ֆեդերատիվ պետությունների բոլոր մասերի վրա առանց որևէ սահմանափակումների կամ շեղման:

**Հոդված 51**

1. Սույն դաշնագրի մասնակից ցանկացած պետություն կարող է առաջարկել ուղղումներ և դրանք ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն այնուհետև ցանկացած առաջարկված ուղղում ուղարկում է սույն դաշնագրի մասնակից պետություններին, խնդրելով իրեն հայտնել, թե արդյոք նրանք համաձայն են հրավիրել մասնակից պետությունների կոնֆերանս՝ այդ առաջարկությունները քննարկելու և դրանց վերաբերյալ քվեարկություն անցկացնելու նպատակով: Եթե մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդը արտահայտվի այդ կոնֆերանսի անցկացման օգտին, գլխավոր քարտուղարը հրավիրում է այդ կոնֆերանսը՝ Միավորված ազգերի կազմակերպության հովանավորության ներքո: Այդ կոնֆերանսին ներկա գտնված և քվեարկությանը մասնակցած մասնակից պետությունների մեծամասնության կողմից ընդունված ցանկացած ուղղում ներկայացվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հաստատմանը:

2. Ուղղումներն ուժի մեջ են մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից դրանք հաստատվելուց և համաձայն սույն դաշնագրի մասնակից պետությունների սահմանադրական ընթացակարգերին նրանց երկու երրորդի մեծամասնությամբ ընդունվելուց հետո:

3. Ուղղումներն ուժի մեջ մտնելու պահից դառնում են պարտադիր այն մասնակից պետությունների համար, որոնք ընդունել են դրանք, իսկ մյուս մասնակից պետությունների համար պարտադիր են մնում սույն դաշնագրի դրույթները և նրանց կողմից ընդունված նախորդ ցանկացած ուղղումը:

**Հոդված 52**

Անկախ 48-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն արված ծանուցումներից, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը ծանուցում է բոլոր պետություններին, որոնց մասին նշված է նույն հոդվածի 1-ին կետում, հետևյալի մասին.

ա/ 48-րդ հոդվածի համաձայն կատարված ստորագրումների, վավերացումների և միանալու մասին.

բ/ 49-րդ հոդվածի համաձայն՝ սույն դաշնագրին ուժի մեջ մտնելու ժամկետի մասին և 51-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած ուղղումների ուժի մեջ մտնելու ժամկետի մասին:

**Հոդված 53.**

1. Սույն դաշնագիրը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարապես վավերական են, ենթակա է ի պահ հանձնման Միավորված ազգերի կազմակերպության արխիվին:

2. Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն դաշնագրի վավերացված պատճեններն ուղարկում է բոլոր այն պետություններին, որոնք նշված են 48-րդ հոդվածում: